«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝Աստղիկ Վիրաբյան

Ուսումնական հաստատություն՝ Չեխովի անվան N 55 հիմնական դպրոց

Երևան 2022

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ուսուցիչը դպրոցում առանցքային դերակատար է, և նրա մասնագիտական գործունեության բովանդակությունից, որակից, մակարդակից է կախված երեխաների կրթության և դաստիարակության, ենթադրաբար նաև ուսումնական հաստատության գործունեության արդյունավետությունը: Մանկավարժի վարպետությունը նախ և առաջ պայմանավորված է մանկավարժության, հոգեբանության, ուսման և դասավանդման բնագավառներում նրա մասնագիտական և առարկայական գիտելիքների և գործնական հմտությունների ազատ տիրապետման մակարդակով: Սույն աշխատանքում ներկայացված է մանկավարժի կոմպետենցիաների շրջանակը, ներառյալ ստեղծագործական և հետազոտական հմտությունները, որոնք զարգանում են մասնագիտական գործունեության ընթացքում շարունակական մասնագիտական կրթության և հետազոտական ու ստեղծագործ աշխատանքի միջոցով:

Հետազոտությունը փաստում է, որ մանկավարժի ստեղծագործական ներուժը ձևավորվում է նրա հոգեբանամանկավարժական և առարկայական գիտելիքների, նոր գաղափարների և հմտությունների հիման վրա, որոնք թույլ են տալիս ուսումնադաստիարակչական աշխատանք իրականացնելիս գտնել և կիրառել յուրօրինակ որոշումներ, մանկավարժական գործունեություն իրականացնել նորարարական մեթոդներով և դրանով իսկ կատարելագործել սեփական մասնագիտական գործառույթների իրագործումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....4
ԲՈՒՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 5
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը հարափոփոխ ոլորտ է և բնութագրվում է նոր գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստեղծմամբ, շարունակական զարգացմամբ ու փոխանցմամբ, որը ենթադրաբար պահանջում է մանկավարժների մասնագիտական փորձի և դասավանդման հմտությունների շարունակական կատարելագործում: Կրթության ոլորտի բարեփոխումների իրականացման, կրթության որակի ապահովման ու բարելավման գործընթացներում առանձնահատուկ կարևորվում է մանկավարժների՝ որպես ոլորտում փոփոխություններ իրականացնողների և այդ փոփոխությունների անմիջական ազդեցությունը կրողների դերը: Հետևապես, կրթության որակը բարելավելու և կրթության ոլորտի առաջանցիկ զարգացումն ապահովելու նկատառումներից ելնելով՝ ներկայումս մանկավարժների շարունակական մասնագիտական զարգացման գործընթացի կատարելագործումը կրթության ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է:

Մանկավարժի մասնագիտական գործունեության բարդությունն ու բազմակողմանիությունը, այդ գործունեության շրջանակներում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումները, ինչպես նաև կրթության որակի նկատմամբ ներկայացվող մշտափոփոխ պահանջները պայմանավորել են սույն աշխատանքի *արդիականությունը*: Վերջինս պայմանավորված է նաև կրթության որակի նկատմամբ շահակիցների տարաբնույթ պահանջմունքներով, ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմամբ ու կրթության կազմակերպման գործընթացներում դրանց հաճախակի կիրառմամբ, ինչպես նաև տնտեսության և հասարակության զարգացման գործընթացներում կրթության դերի առավել կարևորմամբ ու անհատի ողջ կյանքի ընթացքում ուսումնառության անհրաժեշտությամբ:

Կրթության որակը գնահատելիս նախ և առաջ հաշվի է առնվում սովորողների ակադեմիական առաջընթացը, որը պայմանավորված է նաև մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետությամբ: Հետևապես կրթության ոլորտում առավել հաճախ քննվող հիմնահարցերի թվում են մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման ուղիները: Սույն աշխատանքի *նպատակն է* ներկայացնել ուսուցչի մասնագիտական կոմպետենտության շրջանակը՝ ներառյալ ստեղծագործական և հետազոտական հմտությունները:

ԲՈՒՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտի բարեփոխումների իրականացման և գիտելիքահենք հասարակության զարգացման արդի գործընթացներում իրենց ուրույն դերն ունեն մանկավարժները, որոնց մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման համար ձևավորվում են նոր պահանջներ՝ միտված անհատի, հասարակության, պետության կարիքների բավարարմանը և կրթության որակի բարելավմանը: Հետևապես, մանկավարժի առարկայական և մասնագիտական գիտելիքներին և հմտություններին անդրադառնալու անհրաժեշտությունը նախ և առաջ բխում է որակյալ կրթություն ապահովելու պահանջից: Կրթության ոլորտի զարգացման հաջողությունը պայմանավորված է ոչ միայն կրթության պետական քաղաքականությամբ և ձեռնարկված միջոցառումներով, այլև մանկավարժների մասնագիտական պատրաստվածությամբ, մասնագիտական գիտելիքները շարունակաբար համալրելու պատրաստակամությամբ ու մասնագիտական գործունեության մեջ նորարարություններ ներդնելու շարժառիթներով:

Մրցունակ կրթության համակարգի ձևավորման հիմքը որակյալ հանրակրթության կազմակերպումն ու իրականացումն է: Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումն ընդհանուր կրթության և դաստիարակության խնդիրն է և գործառութային տեսանկյունից իրականացվում է հանրակրթական դպրոցում: Հանրակրթության որակը պայմանավորվում է աշակերտների կրթական հաջողություններով, իսկ նրանց առաջադիմությունն ապահովող կարևորագույն գործոններից են ուսուցիչներն ու հաղորդվող կրթության բովանդակությունը (ուսումնական գործընթացը): Կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ որակյալ ուսուցիչներ, որոնք կկարողանան մշակված կրթության բովանդակության միջոցով նպաստել աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը:

Մանկավարժի մասնագիտությունն այն մասնագիտություններից է, որն ուղղված է մասնագիտական գործունեության բոլոր սուբյեկտների զարգացմանը. մանկավարժական գործունեության իրականացմամբ մանկավարժը նպաստում է ոչ միայն սովորողների, այլև իր մասնագիտական զարգացմանը: Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորումն ու զարգացումն ավելի արագ են ընթանում, երբ մանկավարժը հանդես է գալիս որպես այդ գործընթացների ակտիվ սուբյեկտ, միավորում

է սոցիալական փորձը մասնագիտականին, մանկավարժական կոլեկտիվն աջակցում և քաջալերում է նրան մասնագիտական ստեղծագործ նախաձեռնություններում, իսկ կրթական միջավայրը նպաստում է յուրաքանչյուր մանկավարժի անհատական կատարելագործմանն ու մասնագիտական աճին:

Մանկավարժի մասնագիտությունը համարվում է գիտելիքատար մասնագիտություն, քանի որ վերջինիս կողմից մասնագիտական գործունեության մեջ կատարվող ամենամեծ ներդրումը գիտելիքն է: Գիտելիքատար մասնագիտության կրողներն ունեն մասնագիտական գիտելիքների մեծ պաշար ու փորձ, և նրանց մասնագիտական գործունեության հիմնական խնդիրներից են այդ գիտելիքների ստեղծումը, փոխանցումն ու կիրառումը: Մանկավարժական գործընթացն ուղղված է սովորողների կրթության ու դաստիարակության խնդիրների լուծմանը, նրանց ընդունակությունների և անձնային որակների բացահայտմանն ու զարգացմանը: Եվ քանի որ 21-րդ դարում կրթության հիմնական նպատակը սովորողների անհատական զարգացման ու շարունակական կրթության հնարավորությունների և պայմանների ապահովումն է, ապա մանկավարժները նույնպես պետք է շարունակական կրթության միջոցով համալրեն իրենց մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաները (կարողունակությունները) (Сластенин и др. 2013):

Դասավանդման և ուսուցման միջազգային հետազոտությունը (Teaching and Learning International Survey) (TALIS 2019: 26) մանկավարժի մասնագիտությունը սահմանում է հետևյալ հինգ բաղադրիչների միասնությամբ.

- մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջություն, որը ձևավորվում է մասնագիտական կրթության ընթացքում և զարգանում մասնագիտական գործունեության ընթացքում շարունակական մասնագիտական զարգացման միջոցով,
- հասարակության շրջանում մանկավարժի մասնագիտության հեղինակություն և մանկավարժի կողմից մասնագիտական գործառույթների արդյունավետ իրականացում, ինչպես նաև մասնագիտական զարգացմանն ու առաջընթացին ուղղված պետական և ինստիտուցիոնալ քաղաքականություն,
- գործընկերների վերահսկողություն՝ հիմնված ինքնակարգավորվող և մասնագիտական կոլեգիալ հարաբերությունների վրա, որոնք ապահովում են համագործակցությունը մասնագիտական գործունեության արդյունավետության

բարձրացման և կոլեկտիվի ինքնակառավարման մեխանիզմների ամրապնդման նպատակով,

- պատասխանատվություն ու ինքնավարություն, որն ուսուցիչները ստանձնում են ամենօրյա աշխատանքում,
- սոցիալական արժեքներ:

Կրթության համակարգում իրականացվող բարեփոխումները, որոնք ուղեկցվում են քաղաքական և սոցիալական փոփոխություններով, ինչպես նաև այդ համակարգում նորարարությունների իրականացումը ձևավորում են այնպիսի մանկավարժի նոր կերպարի և նոր գործառույթների անհրաժեշտություն, որի գործունեության համար անհրաժեշտ են ոչ միայն մասնագիտական և առարկայական գիտելիքներ, այլև այդ գիտելիքների նկատմամբ ստեղծագործ մոտեցում և նոր հմտությունների շարունակական ձեռքբերման ձգտում: Մանկավարժի թե՛ անհատական, թե՛ մասնագիտական ինքնագիտակցությունը թույլ են տալիս զբաղվել իր և սովորողների զարգացման գործընթացներով: Մանկավարժը շարունակաբար զարգացող անհատ է, և մանկավարժական մասնագիտական ներուժի միջոցով նա կարողունակ է շարունակական զարգացման և կատարելագործման: Անհատական աճը պայմանավորված է շարունակաբար ավելի կոմպետենտ դառնալու ձգտումով, իսկ մանկավարժի մասնագիտության պարագայում անհատական աճը մասնագիտական պրոֆեսիոնալիզմի ձևավորման կարևորագույն նախադրյալներից է:

Մասնագիտական գործունեության իրականացման տեսական և գործնական պատրաստվածությունն արտացոլվում է մանկավարժի մասնագիտական և առարկայական գիտելիքների, ինչպես նաև դրանք գործնականում մանկավարժական խնդիրների լուծման ընթացքում կարողությունների և հմտությունների գործադրման միջոցով: Կրթության բովանդակության, կրթության և ուսուցման տեխնոլոգիաների, սովորողների անհատականության և նրանց առանձնահատկությունների ընկալման, ուսուցման և դաստիարակության գործընթացների կազմակերպման մեթոդների, սովորողների սոցիալականացման եղանակների տիրապետումը ձևավորում են մանկավարժի մասնագիտական գիտելիքները: Մասնագիտական գործունեության իրականացմանը նպաստում են ոչ միայն մասնագիտական և առարկայական, այլ նաև ընդհանրական կոմպետենցիաները, իսկ նշյալ կոմպետենցիաների շրջանակն արտացոլում է մանկավարժի մասնագիտական պատրաստվածությունը: Ուսուցչի

մասնագիտական պատրաստվածություն ասելով՝ պետք է հասկանալ նրա *գիտական և տեսական պատրաստվածությունը* (մանկավարժական, առարկայական, հոգեբանական, ընդհանրական գիտելիքներ), *հոգեբանական պատրաստվածությունը* (շարժառիթներ, հետաքրքրություններ), *գործնական պատրաստվածությունը* (մասնագիտական-մանկավարժական կարողություններ և հմտություններ), *հոգեֆիզիոլոգիական պատրաստվածությունը* (մասնագիտական գործունեությանն անհրաժեշտ անձնային որակներ), *ֆիզիկական պատրաստվածությունը* (աշխատունակություն, առողջական վիճակ, հույզեր):

Մանկավարժական գործունեությունը բազմագործոն և բազմագործառույթ է. այն ներառում է հետևյալ բաղադրիչները՝ հոգևոր (արժեհամակարգի համալրում), ինտերակտիվ (փոխգործուն) (սովորողների և գործընկերների հետ արդյունավետ հաղորդակցման ապահովում), ստեղծարար (սովորողների և մանկավարժի համատեղ ստեղծագործ աշխատանք, այլ մանկավարժների փորձի յուրացում) և մեթոդական (ուսուցման ժամանակակից մեթոդների ուսումնասիրում և կիրառում): Քննելով մանկավարժական գործունեության բաղադրիչները՝ կարելի է եզրակացնել, որ մանկավարժական կոմպետենտությունն արտահայտվում է մանկավարժական գործունեության այս բոլոր բաղադրիչների միջոցով: *Մանկավարժական կոմպետենտությունը* ներկայացվում է որպես մանկավարժի մասնագիտական և առարկայական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ամբողջություն, որով պայմանավորված է մանկավարժի մասնագիտական գործունեության արդյունավետությունը: Մանկավարժների գործունեության մեջ առանձնացվում են մասնագիտական կոմպետենտության հետևյալ բաղադրիչները՝ նախագծային և պլանավորման, ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, տեխնոլոգիական, արժևորման ու գնահատման, կազմակերպչական, կառավարչական, գիտահետազոտական (Պետրոսյան 2013: 7):

Մանկավարժական կոմպետենտությանն անդրադառնալով՝ պետք է նշել, որ այն բազմագործոն երևույթ է ու ներառում է մանկավարժի տեսական գիտելիքների համակարգը և դրանք ստեղծագործաբար կոնկրետ մանկավարժական իրավիճակներում կիրառելու կարողություններն ու հմտությունները, մանկավարժի մասնագիտական շարժառիթները, արժեհամակարգն ու արժեքային կողմնորոշումը, ինչպես նաև նրա մանկավարժական մշակույթի մի շարք բաղկացուցիչները (խոսք, շփման ոճ,

մանկավարժական գործունեության նկատմամբ հումանիստական մոտեցում, հարակից ոլորտների վերաբերյալ իրազեկվածություն): Այսպիսով, մանկավարժական կոմպետենտությունը ներկայացնում է մանկավարժի տեսական և գործնական պատրաստականության ամբողջությունը:

Մանկավարժի արժեքային կողմնորոշիչները, նրա հետաքրքրություններն ու կարիքներն արտացոլում են մանկավարժական փորձառության աստիճանը: Մասնագիտական գործունեության ընթացքում ստեղծագործ աշխատանքի շնորհիվ այդ արժեքները վերաիմաստավորելիս զարգանում է մանկավարժի ընդհանուր և մասնագիտական մշակույթը: Մանկավարժի մասնագիտական մշակույթի հիմքը նրա ընդհանուր մշակույթն է, որը դրսևորվում է նրա բազմաբնույթ մտածողության, լայն մտահորիզոնի, ընդհանուր զարգացվածության և խորահմտության, մարդկանց, բնությանը, արվեստին հաղորդակից լինելու բարոյական և գեղագիտական պահանջմունքների միջոցով: Մանկավարժի մասնագիտական մշակույթն արտացոլում է նրա մասնագիտական վարպետությունը, դասավանդման մեթոդաբանության տիրապետման և մշակութաստեղծ գործունեության հմտությունները: Մանկավարժի մասնագիտական մշակույթը ձևավորվում է հետևյալ բաղադրիչներից՝ *մանկավարժական մտածողության մշակույթ* (մանկավարժական գործունեության սկզբունքների տիրապետում և կիրառում, մանկավարժական գործունեության վերջնարդյունքների կանխատեսում), *մանկավարժական գործունեության մշակույթ* (մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների տիրապետում), *մանկավարժի ստեղծարար մշակույթ* (տեսական գիտելիքների և գործնական հմտությունների համադրում մասնագիտական խնդիրների լուծման ընթացքում), *մանկավարժի հաղորդակցման մշակույթ* (կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցների հետ շփման հմտությունների տիրապետում): Մանկավարժի մասնագիտական մշակույթի տիրապետման մակարդակն արտացոլվում է մանկավարժի՝ կրթության համակարգի, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման գործընթացներում իր ունեցած դերի կարևորության գիտակցմամբ: Մանկավարժական մշակույթն արտացոլում է մանկավարժի հոգևոր և նյութական արժեքները, ինչպես նաև ստեղծարար գործունեության հմտությունները, որոնք անհրաժեշտ են սերնդեսերունդ փորձի փոխանցման համար:

Մանկավարժի մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաների զարգացման հիմքում հիմքում մանկավարժական փոխազդեցությունն է, որի արդյունքը մանկավարժի և սովորողի անհատականությունների որակական փոփոխություններն են: Մանկավարժը ստեղծում է համապատասխան պայմաններ սովորողի անհատական ներուժի դրսևորման, ձևավորման և զարգացման համար՝ միևնույն ժամանակ ռեֆլեքսիայի իրականացման միջոցով բարելավելով ու զարգացնելով իր մասնագիտական գործունեության առանձին բաղադրիչները:

Մանկավարժական մասնագիտական ներուժի գործադրումը նույնպես տեղի է ունենում երկկողմանի գործունեության արդյունքում, որը մի կողմից ենթադրում է մանկավարժի ջանքերը, իսկ մյուս կողմից՝ սովորողի ակտիվությունն ու գործունեությունը: Հետևապես կարելի է նշել, որ մանկավարժական մասնագիտական ներուժը գործադրվում է փոխպայմանավորված ստեղծագործ աշխատանքի միջոցով, այսինքն՝ մանկավարժի և սովորողի փոխազդեցության արդյունքում: Այս պարագայում մանկավարժական մասնագիտական ներուժը պետք է դիտարկել որպես վերջնարդյունքների չափման միավոր՝ պարզելու տվյալ վերջնարդյունքի ձեռքբերման համար որքան ջանք է պահանջվում տվյալ կրթական միջավայրում: Մանկավարժական մասնագիտական ներուժի գործադրման արդյունավետության չափանիշը մանկավարժական գործընթացի սուբյեկտների գոհունակությունն է ստացված վերջնարդյունքներից: Իսկ վերջնարդյունքների գնահատման համար օգտագործվում են այնպիսի չափանիշներ, որոնք ցույց են տալիս մանկավարժական մասնագիտական գործունեության նկատմամբ ներկայացված պահանջների և այդ գործունեության իրականացմանն անհրաժեշտ մանկավարժական մասնագիտական ներուժի միջև եղած համապատասխանությունը: Քանի որ մանկավարժական գործունեության հիմնական պայմաններից է մանկավարժի և սովորողի միջև փոխազդեցությունը, որը համապատասխանաբար ենթադրում է երկուսի գործունեության մեջ փոփոխություններ, ուստի խիստ կարևորվում են մանկավարժի ընդգծված անհատականությունն ու մասնագիտական կոմպետենտությունը՝ ապահովելու նախապես սահմանված վերջնարդյունքները: Իր հերթին, մանկավարժական մասնագիտական ներուժի գործադրման արդյունավետությունը մասնագիտական ու անհատական զարգացման և հաջողության կարևորագույն ցուցանիշներից է:

Մանկավարժի մասնագիտական կայացումն արդյունավետ կարող է լինել, երբ նա պատրաստ է մասնագիտական կատարելագործման, շարունակական կրթության և զարգացման, ինքնակրթության և ինքնազարգացման: Շարունակական կրթության իրականացման համատեքստում մանկավարժի մասնագիտական կայացման կարևորագույն շարժառիթներից են մասնագիտական (մասնագիտության ձեռքբերում և մասնագիտական գործունեության իրականացում), ճանաչողական (նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերում), հեռանկարային (որակավորման և վերաորակավորման ձեռքբերում՝ հետագայում մասնագիտական առաջխաղացում ունենալու և հավելավճար ստանալու նպատակներով), սոցիալական (անհատի, հասարակության և պետության զարգացում), անհատական (հեղինակության, հաջողությունների և հասարակական դիրքի ձեռքբերում) գործոնները:

Մանկավարժների մասնագիտական և առարկայական կոմպետենցիաների զարգացման հիմնահարցերը քննվում են շարունակական մանկավարժական կրթության համատեքստում: Զարգացող պետության և հասարակության՝ կրթության որակի նկատմամբ հարափոփոխ պահանջները ձևավորել են մանկավարժական այնպիսի կադրերի պատրաստման և վերապատրաստման անհրաժեշտությունը, որոնք արդյունավետ կերպով կկարողանան հետազոտական աշխատանքների միջոցով նպաստել ոլորտի առանցիկ զարգացմանը, բացահայտել մանկավարժության առաջավոր փորձը, ստեղծագործականության միջոցով լուծել մասնագիտական խնդիրներն ու իրականացնել մասնագիտական գործունեություն, իսկ դա հնարավոր է շարունակական կրթության միջոցով: Շարունակական մանկավարժական կրթությունը նախ և առաջ նպաստում է անհատի կրթական պահանջմունքների բավարարմանը, այսինքն միտված է նրա մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաների համալրմանը, մանկավարժի շարունակական զարգացմանն ու կատարելագործմանը, հետևապես նաև ընդհանուր և մասնագիտական կրթության որակի բարելավմանը:

Մանկավարժների մասնագիտական և առարկայական կոմպետենցիաների զարգացման գործընթացները չեն սահմանափակվում միայն մանկավարժական մասնագիտական կրթությամբ, այլև շարունակվում են ողջ մասնագիտական գործունեության ընթացքում՝ նպատակաուղղված մասնագիտական փորձի և կոմպետենցիաների համալրմանը: Շարունակական մանկավարժական կրթությունը մանկավարժի ստեղծագործ ունակությունների զարգացման և անհատական

մասնագիտական փորձի համալրման համար անհրաժեշտ նախադրյալ է: Մանկավարժական մասնագիտական ներուժի զարգացումը հիմնվում է շարունակական մասնագիտական կրթության վրա, որը ներառում է նաև մանկավարժի ինքնակրթությունը, ինքնադաստիարակությունը, ինքնազարգացումը, ինքնակատարելագործումը՝ հնարավորություն տալով զարգացնել պոտենցիալ մասնագիտական հնարավորություններն ու նաև արդյունավետ կերպով գործադրել այդ ներուժը մասնագիտական գործունեության ընթացքում:

Ուսուցիչների մասնագիտական զարգացումը նպատակուղղված է ուսուցիչների մասնագիտական գործունեության և աշակերտների առաջադիմության բարելավմանը (Bubb & Earley 2007: 4): Ուսուցիչների մասնագիտական զարգացումը ներառում է ուսումնառության ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ եղանակները: *Մասնագիտական զարգացման ֆորմալ եղանակներից են* միջին, բարձրագույն և հետբուհական մանկավարժական մասնագիտական կրթությունը:

Մասնագիտական զարգացման ոչ ֆորմալ եղանակներից են.

- որակավորման բարձրացման կրթական ծրագրերն ու դասընթացները,
- վերապատրաստումները և աշխատաժողովները (օրինակ, առարկայի դասավանդման մեթոդիկայի և/կամ դասավանդման գործընթացին առնչվող թեմաների ուսումնասիրություն),
- գիտաժողովները և սեմինարները (ուսուցիչներն ու հետազոտողները ներկայացնում են իրենց հետազոտությունների արդյունքները և քննարկում կրթության ոլորտի հիմնախնդիրները),
- հետազոտական և ճանաչողական այցերն այլ դպրոցներ,
- մասնագիտական ցանցերին ու խմբակներին անդամակցությունը,
- մենթորությունը և/կամ գործընկերային գնահատումը:

Մասնագիտական զարգացման ինֆորմալ եղանակը ենթադրում է.

- մասնագիտական գրականության ընթերցումը (մասնագիտական ամսագրեր, գրքեր, հետազոտություններ),
- մասնագիտական հետաքրքրությունների շրջանակներում ուսուցիչների անհատական և խմբային հետազոտությունները,
- գործընկերների հետ ուսուցման բարելավման գործընթացի վերաբերյալ ինֆորմալ քննարկումները:

Ընդհանուր առմամբ, ուսուցիչների մասնագիտական զարգացման վերոնշյալ եղանակները նպատակաուղղված են նրանց մասնագիտական և առարկայական գիտելիքների, կարողությունների, հմտությունների և փորձի համալրմանը: Ուսուցիչների մասնագիտական զարգացումը հնարավորություն է տալիս երաշխավորելու, որ այն ձևավորող գործընթացները նպաստում են անհատական, ինստիտուցիոնալ և պետական նպատակների իրականացմանը, կրթության որակի և աշակերտների ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ուսուցիչների ստեղծագործական և հետազոտական հմտությունների համալրմանն ու զարգացմանը:

Ուսուցիչների մասնագիտական զարգացումն ունի մի շարք նպատակներ.

- համալրել մասնագետների՝ մանկավարժության առաջավոր փորձի և զարգացումների վերաբերյալ մասնագիտական գիտելիքները,
- զարգացնել մասնագետների կոմպետենցիաները, մասնագիտական մտածողությունը, դիրքորոշումները և մոտեցումները կրթական արդի հետազոտությունների արդյունքների, դասավանդման նոր մեթոդների և միջոցների ներկայացման միջոցով,
- աջակցել մասնագետներին ուսումնական պլաններում ու դասավանդման պրակտիկայում համապատասխան փոփոխություններ իրականացնելու գործընթացներում,
- աջակցել դպրոցներին ուսումնական պլաններին և դասավանդման պրակտիկային առնչվող նոր ռազմավարությունների իրականացման գործընթացներում,
- տարածել մանկավարժության առաջավոր փորձն ուսուցիչների շրջանում,
- նպաստել կատարողականի ցածր արդյունավետություն ունեցող ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև բարձր արդյունավետություն ունեցող ուսուցիչների մասնագիտական կատարելագործմանը:

Արդյունավետ մասնագիտական զարգացում տեղի է ունենում կրթական այնպիսի միջավայրում, որը խրախուսում և աջակցում է ուսուցիչների շարունակական զարգացմանը: Այսինքն, եթե դպրոցում առկա է համագործակցության մթնոլորտ, ապա արդյունքը կլինի փորձի և նոր գաղափարների փոխանակումը, ինչպես նաև դասարանային խնդիրների արդյունավետ լուծումը: Փորձառու ուսուցիչ լինելու կարևոր նախապայմաններից են համագործակցության բարձր մակարդակն ու

հետազոտությունների արդյունքների վրա հիմնված մասնագիտական զարգացումը: Արդյունավետ մասնագիտական զարգացումը նպաստում է ուսուցիչների փորձի համալրմանը, մանկավարժագիտության զարգացմանը, մասնագիտական հանրությունների ձևավորմանն ու զարգացմանը, դրականորեն է ազդում աշակերտների ուսումնառության արդյունավետության վրա, ինչպես նաև աջակցում է կրթական բարեփոխումների իրականացմանը:

Ակնհայտ է, որ արդյունավետ մասնագիտական զարգացումն էական նշանակություն ունի մանկավարժագիտության և մանկավարժական մասնագիտական ներուժի զարգացման տեսանկյուններից: Վերլուծությունները փաստում են, որ ուսուցիչներն իրենց մասնագիտական աճի ապահովման գործընթացում ակտիվ դերակատարներ են: Որքան մեծ են ուսուցչի ջանքերը լինելու ակտիվ սովորող մասնագիտական գործունեության ընթացքում, այնքան ավելի լավ կրթական վերջնարդյունքներ են արձանագրում աշակերտները (Hattie 2009: 25):

Ուսուցիչների համար կարևոր է մասնագիտական զարգացման ծրագրերի ընթացքում լուծել մասնագիտական այնպիսի խնդիրներ, որոնք հետագայում կարող են կիրառել դասարանում իրենց աշակերտներին դասավանդելիս: Մասնագիտական զարգացման արդյունքն արտացոլվում է ուսուցչի կողմից ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և փորձի միջոցով: Արդյունավետ մասնագիտական զարգացումը նպաստում է, որպեսզի ուսուցիչները գործնական աշխատանքի արդյունքում զարգացնեն ու կիրառեն ուսուցման նոր տեսություններ և դասավանդման մեթոդներ: Մասնագիտական զարգացումը նպաստում է ուսուցիչների կողմից իրենց մասնագիտական գործունեության արդյունավետության գնահատման հմտությունների ձևավորմանը, կատարելագործվելու հնարավորությունների բացահայտմանը, մասնագիտական զարգացման շարժառիթների հստակ գիտակցմանը, որն օգնում է նաև հետագայում ճիշտ մեկնաբանել աշակերտների ուսումնառության շարժառիթները:

Մասնագիտական զարգացման միջոցառումները նպաստում են մասնագիտական զրույցների, բանավեճերի և քննարկումների իրականացմանը, իսկ արդյունքում ձևավորվում են նոր գաղափարներ՝ ուսուցիչների հետագա գործողությունների իրականացման և յուրաքանչյուրի մասնագիտական զարգացման համար: Արդյունավետ մասնագիտական զարգացումն էական ազդեցություն ունի ուսուցիչների մասնագիտական գործունեության արդյունավետության և փորձի զարգացման վրա՝

հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դեռևս դպրոցում դասավանդող ուսուցիչների որոշակի մասը չունի մանկավարժական կրթություն:

Մասնագիտական զարգացման ընթացքում խիստ կարևոր գործոն է գործընկերների հետ և գործընկերներից սովորելը: Դպրոցների միջև համագործակցության արդյունքում դպրոցները կարող են վերածվել ուսումնառության գերազանցության կենտրոնների, որոնք կարող են նպաստել կրթության որակի բարելավմանը, մանկավարժական մասնագիտական ներուժի կարիքների բավարարմանը, կրթական նորարարությունների ստեղծմանը, մասնագիտական գիտելիքների և առաջավոր մանկավարժական փորձի մշակմանն ու տարածմանը: Այդ համագործակցությունն առավել արդյունավետ կլինի միայն այն դեպքում, երբ այն հիմնված է փոխադարձ վստահության, արժեքների, հարգանքի և փոխըմբռնման վրա:

Մասնագիտական զարգացման ընթացքում ուսուցիչներն ունեցած գիտելիքները համադրում են նոր գիտելիքների հետ: Գիտելիքի ստեղծումը փորձարարական գործունեություն է. այն ենթադրում է գիտելիքի վերլուծություն, փոփոխություն, համադրում, փոխանցում, ինչպես նաև նոր գիտելիքի ստեղծում: Ուսուցիչներին անհրաժեշտ են մասնագիտական զարգացման լայն հնարավորություններ, որոնցից նրանք կկարողանան ընտրել իրենց պահանջմունքներին, կարիքներին և նախասիրություններին համապատասխան ծրագրերը: Մասնագիտական զարգացման ազդեցությունն ուսուցչի մասնագիտական փորձի վրա նկատելի կլինի միայն գործնական խնդիրների լուծման եղանակների իմացության դեպքում, երբ ուսուցիչներին կսովորեցնեն՝ ինչպես տվյալ նյութը բացատրել աշակերտներին, դասավանդման ինչ մեթոդիկա ընտրել, ինչպես օգտագործել մանկավարժական հմտությունները, գնահատել աշակերտներին, վերլուծել նրանց կրթական վերջնադյունքները և այլն:

Արդյունավետ մասնագիտական զարգացման ընթացքում իրականացվում են տարատեսակ հետազոտություններ: Ուսուցիչների մասնագիտական փորձը զարգացնելու կարևորագույն եղանակներից է հետազոտությունների իրականացումը: Հնարավոր է իրականացնել հետազոտություններ անհատական կամ գործընկերների հետ խմբային եղանակով՝ նպաստելու ուսումնառության և դասավանդման մեթոդների զարգացմանը, ուսումնասիրել արդեն իրականացված հետազոտությունների արդյունքներն ու ներդնել մասնագիտական գործունեության մեջ: Որպեսզի դպրոցները դառնան գերազանցության կենտրոններ, ուսուցիչները պետք է հետազոտությունը

դարձնեն իրենց աշխատանքի կարևորագույն մաս, ակտիվ մասնակցեն մասնագիտական գիտելիքի ստեղծման և գործընկերների շրջանում տարածման գործընթացներին (OECD 2005: 96): Մասնագիտական զարգացման համատեքստում հետազոտությունների իրականացման արդյունքում ստեղծվում է նոր գիտելիք, ինչպես նաև հետազոտություններից ստացված արդյունքները մասնագիտական որոշումների կայացման հիմք են դառնում: Երբ ուսուցիչները հասկանում են իրենց աշակերտների սովորելու իրական հնարավորությունները, կարող են ուսումնասիրություն իրականացնել՝ պարզելու, թե ինչ գիտելիքներ և հմտություններ են հարկավոր՝ բավարարելու աշակերտների կարիքները և պահանջմունքները (Timperley 2011: 10): Հետազոտությունների իրականացումը նպաստում է հետազոտական հանրությունների ձևավորմանն ու ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացմանը:

Ուսուցչի մասնագիտական զարգացումը դիտարկվում է թե՛ մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտական պատրաստման, թե՛ շարունակական կրթության համատեքստում: Հաճախ առանձին սահմանումներում ուսուցչի զարգացումը պրակտիկ գործունեությունից անջատ է դիտարկվում, մինչդեռ պետք է նշել, որ ուսուցչի զարգացումն իրականանում է մասնագիտական գործունեության ամբողջ ընթացքում: Կրթության և առհասարակ հասարակության զարգացումները, նորարարությունները, ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրումները պահանջում են ուսուցիչներից շարունակաբար համալրել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները մասնագիտական գործունեության ամբողջ ընթացքում:

Կրթության ոլորտում իրականացվում են նորարարություններ, և այդ նորարարությունները հանդես են գալիս որպես առանձին մանկավարժների կամ մանկավարժների խմբի մասնագիտական փորձի և ուսումնասիրությունների արդյունք: Մանկավարժության ոլորտում անհրաժեշտ են կրթական նորարարություններ, որոնք կարող են դրսևորվել առաջավոր փորձի տարածման և յուրացման միջոցով, ինչպես նաև գործնականում մանկավարժական հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների ներդրմամբ: Այս համատեքստում պետք է պարզել, թե մանկավարժության ոլորտում որ տարրերն են համարվում անարդյունավետ, բացահայտել մանկավարժական նոր լուծումներ, ստեղծել մանկավարժական նորարարական

նախագծեր, որոնք տարբերվում են նախորդներից, ներկայացնել գործնական արժեք ունեցող նորարարությունների կարևորությունն ու արդյունավետությունը:

Մանկավարժական գործընթացի մեջ կրթական նորարարությունների իրականացումը ենթադրում է նորույթ մտցնել սովորողների և մանկավարժների համատեղ գործունեության կազմակերպման, կրթադաստիարակչական աշխատանքների նպատակի, բովանդակության, ուսուցման մեթոդների և միջոցների մեջ: Այլ կերպ ասած, մանկավարժության ոլորտում նորարարությունների իրականացումը հնարավորություն է տալիս բարեփոխելու կրթության ոլորտը, ուսուցման կազմակերպման ձևերն ու մեթոդները՝ միտված կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, մանկավարժական փորձի համալրմանն ու մանկավարժի վարպետության զարգացմանը:

Մանկավարժական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժի գիտական, մտավոր, ստեղծարար, կրթադաստիարակչական հետազոտական կոմպետենցիաների ամբողջությամբ: Վերջինիս գործունեությունը ենթադրում է հետևյալ փոխկապակցված գործողությունների իրականացումը՝ ուսումնական պարապմունքների ու դասընթացների պլանավորում և անցկացում, սովորողների գիտելիքների գնահատում, ուսումնական և դաստիարակչական գործառույթների իրականացում, դասարանի կառավարում, սովորողների հետ համագործակցություն, մասնագիտական ինքնակրթություն և զարգացում, ներդպրոցական կառավարմանը մասնակցություն, գործընկերների հետ մասնագիտական խնդիրների քննարկում և որոշումների կայացում: Այս համատեքստում կարևորվում է մանկավարժի՝ սեփական նախաձեռնությամբ հանդես գալը, կոնկրետ նպատակների և մանկավարժական խնդիրների լուծմանն ուղղված եղանակների արդյունավետ պլանավորումը, գիտականորեն հիմնավորված որոշումների կայացումը, մանկավարժական բարդ իրավիճակներում որոշումների կայացումը, կրթադաստիարակչական գործընթացին բնորոշ հակասություններն ու շարժիչ ուժերը բացահայտելու կարողությունը:

Մանկավարժի մասնագիտական գործունեությունը ստեղծագործաբար և անհատական ոճով իրականացնելուն նպաստում են մանկավարժի ստեղծարարությունն ու հանկարծաստեղծումը (իմպրովիզացիան): Ստեղծարար մանկավարժին բնորոշ են այնպիսի որակներ, որոնք են նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը,

նորարարությունների ու մասնագիտական հետազոտությունների նկատմամբ հետաքրքրվածությունը, զարգացած մասնագիտական մտածողությունն ու մոտիվացիայի բարձր մակարդակը: Մանկավարժի ստեղծագործ անհատականությունը մասնագիտական գործունեության արդյունավետությունն ապահովող կարևորագույն գործոններից է, քանի որ նրա առաքելությունը չի սահմանափակվում միայն ուսումնական նյութը փոխանցելով. նա նաև էական ազդեցություն է ունենում սովորողի անհատականության, նրա նպատակների, աշխարհայացքի, գիտակցության, արժեհամակարգի ձևավորման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումների համատեքստում կարևորվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացումը, քանի որ կրթության որակը բարելավելու համար պետք է համապատասխանաբար նպաստել նաև ուսուցիչների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը: Ներկայումս ուսուցիչների մասնագիտական խնդիրներից է մասնագիտական կոմպետենցիաների շարունակաբար զարգացումը, որը պայմանավորված է նոր կրթական չափորոշիչների և ծրագրերի մշակմամբ ու ներդրմամբ, աշակերտների կրթական պահանջմունքների փոփոխություններով, դպրոցի և ուսուցիչների հաշվետվողականության նկատմամբ ներկայացվող հարափոփոխ պահանջներով: Հետևապես, մասնագիտական զարգացումն ուսուցիչների մասնագիտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և մասնագիտական գործունեությունը շարունակելու միջոց է:

Ներկայումս կոմպետենտ են համարվում այն մանկավարժները, որոնք ունեն ուսումնառության և մանկավարժական գործունեության ընթացքում ձեռքբերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների, կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեթոդների ու միջոցների, մանկավարժի ինքնազարգացման, մասնագիտական տարբեր խնդիրների լուծման ստեղծարար տարբերակների առաջադրման ու կիրառման, մանկավարժական փորձի կուտակման և փոխանցման կարողությունների ու հմտությունների ամբողջություն: Ուսուցիչների առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտություններն էապես կարող են զարգանալ մասնագիտական միջոցառումների մասնակցության, այլ ուսումնական հաստատություններ փոխայցերի և գործընկերների հետ ոլորտային քննարկումների, անհատական և խմբային հետազոտությունների, մասնագիտական զրույցների և նախագծերի իրականացման միջոցով:

Սույն հետազոտության շրջանակներում առանձնացնել են մի քանի առաջարկներ՝ ուղղված ստեղծագործական և հետազոտական աշխատանքների միջոցով ուսուցիչների կոմպետենցիաների կատարելագործմանը.

- մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացներում մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող

ուսումնական հաստատություններում նախագծային աշխատանքներ և հետազոտություններ իրականացնելու հմտությունների ձևավորմանը և զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում, ինչպես նաև հետազոտական աշխատանքներում ուսանողներին առավել հաճախակի ներգրավվում,

- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների գիտական և գիտաարտադրական գործունեության ընդլայնում և արդյունավետության բարձրացում,
- կրթության ոլորտի բարեփոխումների պլանավորման և իրականացման գործընթացներում ուսուցիչների ներգրավվում և ոլորտի բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում համապատասխան միջոցառումների և հանդիպումների միջոցով,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատությունների և դպրոցների միջև սերտ կապի ու շարունակական համագործակցության ապահովում, այդ համագործակցության շրջանակներում ավելի հաճախակի ոլորտային հետազոտությունների իրականացում,
- ուսուցիչների կողմից հետազոտական աշխատանքների իրականացման համար նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմների մշակում ու կիրառում։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Հ., *Կոմպետենտային մոտեցումը և մասնագիտական կրթության որակի ապահովումը*, Հեղինակային հրատ., Ե., 2013, 264 էջ:
2. Сластенин В.А., Исаев И.Ф., Шиянов Е.Н. *Педагогика:* учебное пособие для студ. высш. пед. учеб. заведений, Изд-во «Академия», М., 2013, 576 с.
3. Bubb S., & Earley P. *Leading and Managing Continuing Professional Development (2nd ed.),* Paul Chapman Publishing, London, 2007, 188 pp.
4. Hattie J. *Visible Learning: A Synthesis of over 800 Meta-Analyses Relating to Achievement*, Routledge, London, 2009, 378 pp.
5. The Organisation for Economic Co-operation and Development (OECD), *Teachers Matter: Attracting, Developing and Retaining Effective Teachers*, Paris, 2005.
6. The Teaching and Learning International Survey (TALIS) 2018 Results, Teachers and School Leaders as Lifelong Learners, Vol. 1, OECD Publishing, Paris, 2019, https://www.oecd-ilibrary.org/education/talis-2018-results-volume-i_1d0bc92a-en
7. Timperley H. *Realising the Power of Professional Learning*, Open University Press, UK, 2011, 224 pp.